Նա գրկեց ինձ եւ սկսեց երեսս համբուրել:

— Դէ՛, հիմա գնայ ինչ «հոգու բաժին» որ ունես, բոլորը բեր, դրանք քաղցած են:

Երէցկինը մի թեթեւ ժպիտ գործեց փոքրիկ երեսի վրայ եւ դուրս վազեց: Երեւում էր, նա շատ ուրախ էր իր հիւրերով, եւ գնաց մեզ համար նախաճաշիկ պատրաստելու:

«Գիժը» փոքր առ փոքր սկսեց ինձ դուր գալ. նրա առաջին ժանտութիւնը, որ ինձ վրայ վատ տպաւորութիւն գործեց, կարծես թէ անցաւ, եւ նա երեւում էր ինձ մի մարդ չափազանց պարզ եւ բարեմիտ:

Ասլանը հարցրուց տէրտէրից, թէ որտե՞ղ են պահուած իր «իրեղէնները: Նա ցոյց տուեց մի ուրիշ սենեակ, եւ Ասլանը առանց առաջնորդի մտաւ այնտեղ: Ես մնացի տէր հօր հետ մենակ:

— Կարդացե՞լ ես, — հարցրուց նա ինձանից:

— Կարդացել եմ, — պատասխանեցի ես:

— Ու՞մ մօտ:

— Մեր թաղի քահանայի, տէր Թոդիկի մօտ:

— Հասկացա...: Դեռ չէ՞ սատկել այն աւազակը:

— Մնում է, — պատասխանեցի ես: — Բայց դուք որտեղի՞ց էք ճանաչում նրան:

— Ո՞վ չէ ճանաչում այն անպիտանին. նա Դատոանի «գզիրն» էր, էլ չարութիւն չթողեց, որ չգործէր: Վերջը «ռեսին» սպանեց, փողերը կողոպտեց, փախաւ, եկաւ Սալմաստ, այնտեղ անունը փոխեց, եւ ասաց, թէ անապատի ճգնաւորեմ, այսպիսով քահանայ դարձաւ. հիմա սկսել է կախարդութիւններով ժողովրդին խաբել: Այդպէս չէ՞:

Այս խօսքերը լսելով, ես բոլորովին զարմացայ:

— Դու ինչպէ՞ս պրծար նրա ձեռքից, — հարցրուց ինձ:

— Փախայ նրա ուսումնարանից:

— Խելացի բան տեսար: Երանի՜ թէ Կարօյի հետ փախած լինէիր. հիմա մի օրինաւոր մարդ դարձած կլինէիր... Ա՜խ, թէ մի անգամ ձեռքս կընկնէր այն անպիտանը....

— Ի՞նչ կանէիք, — հարցրի ես ծիծաղելով:

— Ի՞նչ պէտք է անէի, իր հանգուցեալ հօր մօտ կուղարկէի...